

# ՍԵՊՈՒՀԸ, ՊՐՆ. ԱԲԳԱՐԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ ԵՒ ՄԱԷՍՏՐՕՆ


Posted on August 31, 2014 by Keghart



Category: [Opinions](#)




**Րաֆֆի Պետիկեան, Տինսլաքըն, Գերմանիայ, 6 Օգոստոս 2014**

 - Հոս Կիպրոսի ռատիոկայանի հայկական ժամն Է: Կը հաղորդենք լուրերը: Կիպրոսի նախագահ Մակարիոս Արքեպիսկոս....

Որպէս մանուկ, երբ Պէյրուզ կ'ապրէինք ձայնասփիւռի միջոցով ամէն շաբաթ կը լսէի իր հմայիչ ձայնը, սքանչելի Հայերէնը: Երբ ծնողքիս հետ Կիպրոս կու գայինք արձակուրդի, ամէն անգամ կը սիրէր հիրասիրել, կը տանէր Տէիրմէնլիք գիւղը (Կիպրոսի բռնագրաւուած հիւսիսը) *ղատեյիֆ* ունտելու: Տարբեր էր, ամէն ձեւով...

**Րաֆֆի Պետիկեան, Տինսլաքըն, Գերմանիայ, 6 Օգոստոս 2014**

 - Հոս Կիպրոսի ռատիոկայանի հայկական ժամն Է: Կը հաղորդենք լուրերը: Կիպրոսի նախագահ Մակարիոս Արքեպիսկոս....

Որպէս մանուկ, երբ Պէյրուզ կ'ապրէինք ձայնասփիւռի միջոցով ամէն շաբաթ կը լսէի իր հմայիչ ձայնը, սքանչելի Հայերէնը: Երբ ծնողքիս հետ Կիպրոս կու գայինք արձակուրդի, ամէն անգամ կը սիրէր հիրասիրել, կը տանէր Տէիրմէնլիք գիւղը (Կիպրոսի բռնագրաւուած հիւսիսը) *ղատեյիֆ* ունտելու: Տարբեր էր, ամէն ձեւով...

1976-ին, երբ վեց ամիսով Մելգոնեանցի եղայ, ինծի ուսուցիչ չեղաւ:

Բայց որպէս Մելգոնեանի կեանքը մօտէն ճանչցող, կրնամ ըսել թէ եօթանասունական-ութսունական թուականներուն Մելգոնեանի եւ Կիպրահայ գաղութի մշակութային կեանքը սերտօրէն կապուած էր իր անուան հետ:

Որպէս արուեստի ուսուցիչ, մանաւանդ իր երգչախումբով, հայ պատանիներու մօտ կը դարբներ ՌԳԻ-Մելգոնեանցիի ոգի եւ հայկականութիւն, երբ միասին կ'երգէինք «Սիփանայ Քաջերը»ը, «Խուժան Ասկեր»ը, «Երեւան-Երեբունի»ն եւ «Ազգ Փառապանծ»ը:

Միշտ ըսած եմ եւ ամէն օր կը կրկնեմ: Հայ դատի գլխաւոր նուաճումը հայ նոր սերունդի հայեցի դաստիարակութիւնն է, ոչ թէ այս կամ այն ոճրագործ գաղութարար եւ կայսերապաշտ պետութիւններու ործելէգ բանաձեւերը (թուղթ շերտփները):

Յետո որպէս ոսանող, բժիշկ եւ հասուն մարդ, մօտէն ծանօթացայ իրեն: Երբ հայրս հիւանդացաւ, միշտ մօրս կողքին էր, որպէս հաւատարիմ եւ վստահելի ընկեր: Մօրս առաջարկով ընդունեց տղու՝ Տարօնի կնքահայրութիւնը:

Եղեռնի 75 ամեակին սփիւռքահայ երիտասարդութիւնը անցաւ զինեալ պայքարի, եւ ամենուրեք ստեղծուած էր բեւեռացած վիճակ մը՝ դեր եւ դեմ զինեալ պայքարի:

Պարոն Արգարեան առաջին օրէն կողմ դիրք բռնեց եւ թիկունք կեցաւ այս պայքարին:

Մելգոնեանն էլ էլ է ետք նուիրուեցաւ ուրիշ ծրագրի մը: Հակառակ իր յառաջացած տարիքին տեղափոխուեցաւ Հայաստան եւ ստանձնեց Խաչատուրեան եղբայրներու հիմնած ԳՈՀԱՐ համոյթի ղեկավարութիւնը: Պտըտեցաւ եւ Հայ երգը, Հայաստանի բոյրն ու ձայնը տարաւ գաղութ գաղութ՝ Պոլիս, Միջին Արեւելք, Հարաւային եւ Հիւսիսային Ամերիկա, ջերմացուց եւ խանդավառեց բոլորը:

Հայաստան ապրելով աւելի մօտէն տեսաւ մեր ժողովուրդի ապրած թշուառութիւնը եւ իշխող դասակարգի՝ օլիկարխներու սանձանձակ կաշառակերութիւնը եւ կեղեքումը : Բերանը չէր փակեր, միշտ ուղիղ, բացէն ի բաց կ'ըսեր իր կարծիքը: Երբ ընկերներով կը հաւաքուէինք, կը պատմեր հայրենի ժողովուրդի քաշած թշուառութեան մասին ու լուռ կ'արտասուէր...

Իր մահուընէ մի քանի ամիս առաջ երկար, աւա՛ղ, վերջին հեռաձայնային խօսակցութիւնն էր. նիւթը իր առողջութիւնը եւ Հայաստանի կացութիւնը, Հայաստանի արմատական դիմադրութիւնը՝ պայքարող տղաքը, ժիրայր Սեֆիլեանն ու իր ընկերները, սփիւռքի Հայկական Վերածնունդ շարժումը, կը շեշտէր անհրաժեշտութիւնը անզիջող պայքար տանելու:

Տարօրնակ, շատ տարօրինակ անձ մըն էր Պրն. Սեպուհը...: Սասունցիի զաւակ, ցեղասպանութենէ վերապրածներու *քեմբիս* մէջ ծնած, Հալեպ հասակ առած, Մելգոնեան աշակերտած, Փարիզ ուսանած, արտաքինով միշտ խնամուած ու ժպտերես, ներսէն ապարաժ-կրանիթ....Վոն Գարայեանի, Սերոբ Աղբիւրի ու Գեորգ Չաւուշի խառնուրդ մը...

Սերունդ մը, հոյակապ սերունդ մը:

Մինչեւ ողնաձուծը հայութիւն, անսահման սեր եւ նուիրուածութիւն հայկական արժեքներու ու Հայաստանի հանդէպ:

Մեր տունն ալ, սիրելի Սեպուհ, քեզի պէս երկու անկեղծ զինուոր (հայրս եւ մայրս) ու սպարապետ կորսնցուց...Պիտի գա՛յ արդեօք այսպիսի սերունդ մը...

- Դպրոցները գոցեցէ՛ք, հայակերտումի ամրոցները քանդեցէ՛ք, Մելգոնեանը չորցուցէ՛ք, Հայաստանը թալանեցէ՛ք եւ դատարկեցէ՛ք, եթէ Աստուած չպատժէ ձեզի, Հայ ժողովուրդը պիտի տեսնէ ձեր դատաստանը, պարոնայք նորօրեայ ասպատակողներ:

Սիրելի Սեպուհ, Պրն. Աբգարեան, մենք քու յիշատակիդ «ԱՆՄԱՀ ԼՈՒՄՈՅ»ն պիտի երգենք, Հայերէ՛ն պիտի խօսինք, Հայերէ՛ն պիտի երգենք, Հայաստա՛նը պիտի սիրենք, եւ Հայ դատի համար պայքարինք:

Մելգոնեանի ոգին քեզմով ապրեցաւ եւ քեզի հետ պիտի ապրի...

Յաւիտենական լոյս շիրիմիդ:

*In Memory of Our Beloved Teacher*

**MAESTRO SEBOUH APKARIAN**

*Who Passed Away in Cyprus August 5, 2014*

*Melkonian Alumni and Friends will have a*

*Hokehankisd*

*On Sunday September 7, 2014, 11:00 Am*

*at St John Armenian Church*

*1201 Vine Street, Los Angeles, CA 90038*

*Cross Streets: Between Lexington Ave and La Mirada Ave*

*Following the Church Service, Hokejash will be served at  
The Church Hall (1st Floor) by Melkonian Alumni And Friends*

*[www.melkoniannews.org](http://www.melkoniannews.org); [www.melkonianforever.org](http://www.melkonianforever.org)*

